ձայնէ նորին. այսք չարք հալածական եղեն 'ի հրամանէ նորին, խոստովանեալ զնա Որդի Աստուծոյ։ Եցոյց աշակերտացն թէ զի՞նչ կրելոց իցեն վասն իւր և վասն վարդապետութեան իւրոյ. մարգարէացաւ զանցից և զտարածելոյ եկեղեցւոյ իւրոյ և զկործանմանէ Հրէական տէրութեանն, Երուսաղէմի և Տաճարին, խառն ընդ նոսա և ըզվերջին դատաստանէ. յայտնեաց զանպարագրելի փառս աստուածութեան իւրոյ 'ի լեառն Թափոր, ծանուցեալ զինքն տէր կենդանեաց և մեռելոց. պատմեաց աշակերտացն և թշնամեացն իսկ՝ զիւրոյ ելիցն զոր կատարելոցն էր յԵրուսաղէմ։

Պիղատոսի իսկ զարմացեալ ընդ սքանչելի գեղ աստուածախառն մարմնոյ Փրկչին մերոյ՝ գրեաց զնմանէ առ Տիբեր կայսր եւ առ ամենայն ծերակոյտն Հռոմայ, որ ունէր օրինակ զայս։

Այր մի մեծ՝ առաքինութեամբք իւրովք երեւեցաւ յաւուրս մեր, որում անուն կարդային Յիսուս Քրիստոս, որ յարուցանէ զմեռեալս եւ բժշկէ զամենայն ազգս հիւանդութեանց, և կոչեն զնա Մարգարէ ճշմարտութեան, և ունի նա աշակերտս՝ որք անուանեն զնա Որդի Աստուծոյ։ Այր՝ արդարեւ գեղեցկահասակ և արժանի տեսանելոյ, ունելով դէմս պատկառելի՝ որ տայ զսէր միանգամայն և զերկիւղ ամենեցուն՝ որ 'ի նա հային։ Վարսք իւր են 'ի գոյն հասուն կաղնւոյ՝ միաւորեալ մինչեւ յականջացն 'ի վայր գռուղացեալ եւ գանգրեալ գեղեցիկ և պայծառ՝ որք և սփռեալ և ծածանեալ կան զուսովքն. գոլով նոյն վարսիցն բաժանեալ ընդ մէջ գլխոյն՝ ըստ տարազու Նազովրեցւոց։ Դէմք իւր չունի ինչ արատ և ոչ խորշմութիւնս, կարմրագոյն է և քաղցրագէմ. իսկ ունչք նորա և բերանն չունին ինչ բնաւ ասելի։ Աչք իւր են իբր կապոյտ և իբր կանաչ սպիտակախառն։ Ունի մօրուս թանձր՝ այլ ոչ երկար՝ և է 'ի գոյն վարսիցն՝ և բաժանեալ ընդ ծնոտիւքն։ Զեռք իւր և բազուկք քաղցր են 'ի տեսանել։ Ահաւոր է նա 'ի կշտամբանսն, և 'ի յորդորմունս իւր մարդասէր, սիրելի և զուարթ, բայց միանգամայն և ծանր. քանզի ոչ ոք ետես զնա ծիծաղիլ, այլ արտասուել երբեմն՝ այո՛, դուն ուրեք խօսի՝ և համեստ է 'ի խօսիլ իւ-